



վիճակագրական տեսչակագրության գործակալություն

## “ՓԻՒՆԻԿ,Ի ԾՐԱԳԻՐԸ

- Փիւնիկ պիտի հրատարակուի ամիսն երկու անգամ, ամեն ամսոյ 1ին եւ 15ին:
- 1.—Տոնմայիս կեանքի հին ու նոր պատկերներ, կենսական հարցին վրայ լուրջ ուսումնասիրութիւններ. Հայոց գաղթային հոսանքին վրայ շահեկան տեղեկութիւններ, մասնաւորապէս Եգիպտոսի հին ու նոր գաղթականութեանց:
  - 2.—Անձակ եւ ոսանաւոր բանաստեղծութիւններ, հեղինակութիւն ու բարգիւնութիւն:
  - 3.—Գիտական նորութիւններ, կես-ժամօր ժողովրդոց կեանքէն ու բարքէն մանրամասնութիւններ, հռչակաւոր երկրախոյզներու երկերէն հազուած:
  - 4.—Եգիպտական հնութեանց ու նորութեանց վրայ ուսումնասիրութիւններ, տեղային լուրեր, վարչային ու կրթական խնդիրներու վրայ տեսութիւններ:
  - 5.—Կիսամտայ ընդհ. քաղաքական կացութեան վրայ հոծ ու ամփոփ տեղեկութիւններ:
  - 6.—Արտասահմանի եւ գաւառական քրթակցութիւններ:

### ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

Եղիպտոսի Համար . . . . .	Տարեկան . . . . .	Փր. 10
» » . . . . .	Վեցամսեայ . . . . .	» 6
Արտասահմանի Համար . . . . .	Տարեկան . . . . .	» 13
» » . . . . .	Վեցամսեայ . . . . .	» 7
Կովկասի Համար . . . . .	Տարեկան . . . . .	բուրլ 5

### ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Հայերն ի կրկանէ — Խ. Գահիրէի Հայութիւնը ԴՊՐՈՑԱԿԱՆ ՄԸ  
 Փոքր Ասիոյ Երկաթուղիները. — Ճ. Իրական Կեանքէն (Եակօ).  
 Գահիրէի Ընթերց. Ընկերութիւնը — Օ. Գ. Ազգ. Գրոնիկ.  
 Բանտը. — Ս ԲԻԻՐԱՏ Լրագրող.  
 Կրօնք եւ Աղգասիրութիւն. — Պատ. Մ. Յ.  
 ԳՆԱՃԵԱՆ

Ձեռագիրները եւ շէն դարձուիր: Կ'ընդունուին ամեն տեսակ ազգերի  
 նամակ, յօդուած եւ բաժանորդագին պէտք է զրկել առ Տիար Ս. ԲԻԻՐԱՏ

DIRECTION DE LA REVUE ARMÉNIENNE ՔԻՔՆԻՃ  
 INSTITUTION CENTRALE  
 LE CAIRE



Ե Գ Ի Պ Տ Ո Ս  
Ֆր.  
ՏԱՐԵԿԱՆ... 10  
Վ. ՆՃԱՄՍԵԱՅ 6

ԲԱԺՆԵԳԻՆԸ  
ԿԱՆՈՒԿ Է



ԱՐՏԱՍԱՀՍԱՆ  
Ֆր.  
ՏԱՐԵԿԱՆ... 13  
Վ. ՆՃԱՄՍԵԱՅ 7

ԿՈՎԿԱՍ  
ՏԱՐԵԿԱՆ Բպլ. 5



# Փ Ի Ի Ն Ի Կ

Կ Ի Ս Ս Մ Ս Ե Ա Յ Հ Ա Ն Դ Է Ս

ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔՍՂԱՔԱԿԱՆ

Ա. ՏԱՐԻ

15 ՅՈՒԼԻՍ 1899

ԹԻԻ 8

## ՀԱՅԵՐՆ Ի ԿՐԵՏԷ

Ո՛ր կողմ ալ գտնանք՝ քաղաքական տեսակէտով ուրիշ բան չենք տեսներ բայց միայն վարանումներ, անճարակութիւններ, կեղծատրութիւններ և մինչև իսկ ընկրկում: Կան բազմաթիւ խնդիրներ որոնք երկար տարիներէ ի վեր կը զբաղեցնեն կառավարութիւնները, և այս խնդիրներէն տմանք մտաւարապէս դարու մը հնութիւն ունին: Միակ խնդիր մը, այն է կրէտականը՝ վերջապէս յաջողեցաւ լուծուելու, բայց ո՛չ թէ շահ ունեցող ազգերու, այլ նոյն ինքն կրէտացիներու ձեռամբ որոնք խիստ լաւ հասկըցան թէ իրենց զլխուն ճարը իրենք միայն կրնային նայիլ: Յորչափ իրենց ճակատագիրը պետական մարդերու ձեռաց մէջ մնաց՝ կատարեալ անիշխանութեան մը ձեռք խաղալիք դարձան. թէ՛ կ'ուզուէր և թէ՛ չէր ուզուեր լուծում մը տալ իրենց խնդրոյն. եղաւ և՛ ն եղանակ վերջնական արգիւնքի մը յանգելու համար: Թրքական այժը և կրէտական կաղամբը միանգամայն խնայել ուզելը՝ անկայուն հաւատարակչութիւն մը, Կորդեան հանգոյց մըն էր զոր կրէտացիք՝ հզօր իրենց իրաւունքին մէջ՝ կտրեցին իրենց քա-

ջարի սուրերով: Նոյնպէս մենք՝ Հայերու մեր ճակատագիրը յանձնեցինք տէրութեանց ձեռք, կամ աւելի ճիշդ տէրութիւնները շարժեցին հայկական խնդիրը լուծելու իրաւունքը: Մեր երկարատե մարտիրոսութիւնը հանրային կարծեաց մէջ առաջ բերաւ այնպիսի ընդօտուցիչ կայրոյթ մը, անգիմադրելի համակրութեան այնպիսի հասանք մը որ կառավարութիւնները ստիպուեցան խոնարհիլ այնքան յստակօրէն արտայայտուած այս տիեզերական կաւթին առջև: Սակայն զիտենք դժբաղդաբար թէ ի՞նչ կ'արժեն զիւանագիտական կարգադրութիւնները կամ հնարքները:

Ո՛չ մէկ տէրութիւն չ'ուզեր լըջօրէն կտրուիլ եղած ջանքերն ընել, թէև խնդիրը հրեշտակային պարզութիւն մ'ունենայ: Մեր ուղածը ավերկեան կամ ասիական հողեր չ'են, այլ միայն արգարութեան գործադրութիւնը, և միթէ այնքան պժուա՞ր է իր իրաւունքին տէր ըլլալ: Սակայն հայ ազգը առանց վհառելու, զօրաւոր հաւատքով մը և անընկճելի կրօնով մը լսելի ըրաւ իր ձայնը որուն արձագանգ եղաւ հանրային կարծիքը և նոյն իսկ մամուլն իր գօրեղ աջակցութիւնը նուիրեց: Կառավարութիւններն իրենց հանգստութեան մէջ վրդովուած

զգացին որ ժամանակ էր վերջացէս բան մ'ընելու խեղճ Հայաստանին համար: Եւ բան մ'ըրին . . . առանց բան մ'ընելու: Ըստ երևոյթին հակասութիւն մըն է այս, չէ՞. բայց միթէ վարժուած չե՞նք երկար ատենէ ի վեր ապրելու յաւիտենական հակասութեանց մէջ. միթէ եւրոպական վեհաժողովներու մէջ խմբագրուած չե՞նք *protocoles*ներ: Լա՛ւ, առանց մէջ մեզ կը շտրհեն խղճի աղատութիւն և մեզ կը հարստահարեն. մեր կեանքը կ'ապահովեն և մեզ կը խողովոյն. մեր ինչքերը յարգելու ապահովութիւն կուտան և մեզ կը կողոպտեն. անդորրութիւն կը խտտանան մեզ և շիկերէնելու պէս նեղը կը խօթեն ըզմեզ . . . : Չենք գիտեր թէ մինչև ե՞րբ պիտի տևէ այս շտրաշտր կատակերգոյթիւնը:

Արգ, տեսէ՛ք թէ Տէրութիւնները ինչ եղանակաւ կ'ուզեն կարգադրել հայկական խնդիրը. անոնք կ'ուսալարկեն առջնականութիւն շտրհել կրէտէի մէջ 50,000 հայերու սրնց ամբողջական թիւը կը հասնի (աւելի ճիշդ կը հասնէր) կրբ հաշուով 3 միլիոնի: Հիմակ հաշուենք. Թուրքը՝ դարուս առաջին կիսուն մէջ՝ ջնկեց 50 հազարէն աւելի Հայ. վերջին կուտարածներու ժամանակ անոնցմէ ապահանեց 300 հազար հոգի. յետոյ 80 հազարէն աւելի ալ արտորեց. համագումար 430 հազար Հայ՝ սրնք, Բ. Դուն: ազատեցին իրենց *անկարացուցիչ ներկայութեան*: Ու հիմա Տէրութիւնները կը հաճին՝ իրենց ետանդ վեհանախօսութեամբ՝ գիւրացիներ նաև ուրեջ 50,000 Հայերու արտորը, սրով ընդ ամենը կ'ընէ 480,000 կամ մաստարապէս կէս միլիոն հայ, սրնց կեանքի ապահովումը է՝ արդի գարավերջիկ մարդասիրական բանաձևին համեմատ: Եւ ասիկա կ'անուանեն հայկական խնդրոյ լուծումը: Ենորհակա՛ւ ենք, թո՛ղ տեղը մնայ այդ լուծումը:

Թուականէս տասը դար ետ եր-

թանք, և պիտի գտնենք միևնոյն բանը կատարուած, միևնոյն առիթներու մէջ, երբ բիւզանդական դահլին վրայ բարձրացաւ Փոկաս կայսրն և Սարակինոնները վաճառեց կրէտէն ու տիրեց այդ բարերբեր կղզիին: Այն ատենն ալ, պատերազմը հնձած էր երկրագործ ու աշխատող գասակարգը, ջրաս բաշակներ կը պակսէին կղզեցիներուն, հողը գործելու և արգասաւորելու համար. ուստի, յիշեցին գարձեալ Հայերը, հողին ու քարին փարող այդ ժիր ու զգաստ ժողովորդը. ստուարաթիւ զապթականութիւն մը բերին հոն բնակեցուցին, հայուն քրքարէ՛քով կղզին քիչ ատենի մէջ զբախտի փախուեցաւ, երկրագործութիւնն իր վե՛նիթը գտաւ. բայց ա՛յնքան հանգարտ, այնքան աշխատասէր բնակչութեան մ'այսօր կը մնան երկու գուղեր աւերակ, Սումնիի և Սումնիխանաքանի մը խաչքարեր ու քանի մը սիւներ ու խոյակներ . . . : Ի՞նչ եղան անոնք. կղզիէն գարս չ'ըլան, բայց կորան. այո՛, խառնուեցան շարուեցան ու ձուրուեցան բնիկ Յայներուն հետ: Արգ, ի՞նչ կը կարծէք որ ըլլան հիմակուան 40—50,000 Հայերը, զոյս հարամերթ Թուսիա կը հանէ իր հոգէն ու կը փորձէ տեղափոխել ի կրէտէ. անոնք պիտի հանգիւպին անասարակոյս այն բազմին, զոր տնեցան Խրդ դարու հայ կրէտացիները . . . :

Ի՞նչ, թողու՛ր որ 50 հազար խեղճ ու կրակ հայեր երթա՛ն կրէտէ և հոն ողորմելի ֆէլլահներու պէս երկիրը մշակեն: Անտարակոյս կղզիին բնակիչները վեհանախօսէն թո՛ղ պիտի տային որ անոնք՝ պատու մը հայի համար՝ իրենց քրտինքով սուղեն իրենց հողը և պիտի հաւանէին անոնց յանձնել իրենց տունները ալելու, խահանոցի ամանները լուարու, իրենց հողերը աղբելու հողը՝ ա՛յնքան տաժանելի և ա՛յնքան ստորնացուցիչ՝ զոր պիտի մերժէին ստանձնել նոյն իսկ իրենց փանաքի ազգակիցները. իսկ իրենք կղզեցիք պիտի շտտանային եր-

կոյնիւ ձեռքերնին՝ լեցնելու համար իրենց զբամարկղը: Ե՛հ, շնորհակալ ենք, թող ձեզ մնայ այդ պատիւը: Սակայն այս օրինակ մտածումներ վերագրել մեր բողոքակից յայն եղբայրներուն՝ պարզապէս զբողոքանել պիտի ըլլար զանոնք, լան մը որ երբէք չ'անցնիր մեր միտքէն: մենք լու կը ճանչնանք յայնքը իւր կարի հիւստէր և յոյժ գգայուն՝ հանդէպ արիշ տարաբողոքներու: Մենք քով համազում ենք թէ՛ ս'չ յայնքն եղան այս գծոխային գողափարը յընդունին, և ս'չ ալ բոլոր միացեալ տէրութիւնները կարող եղան սարքել այրքան հանճարեղ յատակագիծ մը: այլ այն ընտանի չար ոգին՝ որ Ապոստոլ-Համբար հոգիին մէջ կը ներշնչէ արիւնի և կտուտի խորհուրդները:

Մենք այն պարզ և ուղղամիտ ոգւով որ չի կրնար բմբռնել սեպտորմի կեղծաւորութեանց ոչորում գիտաւորութիւնները, և ճերմակ կը կոչէ ինչ որ ձրնի պէս կը փայլի ու սև կ'անուանէ արիւնիզակ Սոլթանի հոգին, միակ ելք մը կը տեսնենք մեր գծրաղգ ճակատագրին համար: Թարբիոյէն մատնուեցանք, ճերութիւններէն լքուեցանք, և Խաղաղութեան Համաժողովէն յուսախաբ եղանք: հետեւինք ուրեմն նոյն իսկ կրէտացիներու օրինակին սոսնց կուզուի ընել մեզ բնակակից կամ անուաղն անոնց ծառաներ: Ո՞նենանք անոնց մեծ հոգին և ըսենք անոնց պէս «Որովհետև ոչ որ կ'ուզէ մեզ օգնել, իսկ մենք գիւրու յուսահատողներէն չենք, մեր ուժերէն ուրեմն սպասենք ամեն բան»:

Խ.

**ՓՈՒՐ ԱՍԻՈՅ ԵՐԿԱԹՈՒՂԻՆԵՐԸ**

Երկաթուղիներու ձեռնարկութիւնները փոքր-Մսիոյ մէջ, կը բազմապատակուին: Մտաւոր ապագայի մը մէջ, շնորհիւ միջազգային մրցման, անհաւանական չէ որ ամբողջ երկի-

րը երկաթուղիներու ցանցով մը ծածկուի: Պէտք է հաճութեամբ հաստատել այս գեղեցիկ երևոյթը:

Երկաթուղիները արդարև, քաղաքակրթութեան ճշմարիտ երակներն են, ուր շրջան կ'ընեն երկրի մը կենսական ուժերը: Եթէ միայն թնգանօթներ փոխադրելու և բանակներ շարժման մէջ դնելու ծառայէին, իրենց օգտակարութիւնը կրնար տարակուսելի ըլլալ և մասնաւորապէս փոքր-Մսիոյ համար, անվիճելի կերպով վնասակար, մեր տեսակէտով, քանի որ ասոնք պիտի աւելցնեն թուրքիոյ վնասակարան զօրութիւնը շնորհիւ այն զիւրութեանց զորս փոխադրութեան համար պիտի ընծայեն պատերազմի ժամանակ:

Բայց խաղաղութիւնն է մարդկային կեանքին եթէ ոչ մշտական գէթ սովորական ձևը, և այս ժամանակ է որ երկաթուղիները բնկերական կեանքին արեան շրջանը կը կատարեն: Ոչինչ աւելի անհրաժեշտ է քան երկիրներու արտադրութեանց փոխանակութիւնն իրարու միջև. աւելորդ օգտակարութեանց և պակասած պէտքերուն փոխանակումովը չէ որ պէտքերու և միջոցներու միջև համեմատութիւնը կը հաստատուի: Վաճառականութիւնը, որ միջնորդի գեր կը կատարէ, արտադրող ուժերու և ապառոզ աարբերու միջև, և որուն գլխաւոր գործն է արտադրութեանց փոխանակութիւնն երկրէ երկիր կամ քաղաքէ քաղաք, գծուար թէ հասնէր, ցամաքային երկիրներու մէջ, այն զարգացման աստիճանին ուր կը գտնուի այսօր, անոնց երկաթուղիներու հզօր ու անհրաժեշտ աջակցութեան: Բայց վաճառականութիւնը հեռու չէ նաև բարոյական օգուտներ արտադրելէ, և այս արդիւնքը արդար է վերադրել երկաթուղիին: Տեսեսական շահերու հազորդակցութիւնը չուշանար հաստատել բարոյական կապեր ժողովուրդէ ժողովուրդ կամ երկրէ երկիր:

Փոխադարձ ծառայութեանց յարասե  
կիրարկութիւնը, ժամանակին ըն-  
թացքին մէջ, փոքր առ փոքր մար-  
դոց մէջ կը ստեղծէ այն համոզումը  
թէ իրենք իրարու անհրաժեշտ ու  
օգտակար են, թէ, հետեաբար, պար-  
տին համերաշխօրէն միանալ ներ-  
դաշնակ ամբողջ մը կազմելու համար,  
թէ վերջապէս — և այս արդիւնքը  
ամենահեռաւոր ժամանակի մը կը  
կարօտի — միեւնոյն բնութան զա-  
ւակներն են՝ տարբեր միայն ծննդ-  
զավայրով, և, ասոր արտազգրած ան-  
միջական հետեանքներով և, ամենքն  
ալ նոյն պէտքերով, նոյն կարողու-  
թիւններով, և, հետեաբար, նոյն շա-  
հերով զինուած:

Փոքր չէ նաև այդ «Հրաշունջ վն-  
չապին» գործած բարերար ազգեցու-  
թիւնը ժողովրդին երեսակայութեան  
վրայ: Այդ խորհրդաւոր ու անըմ-  
բռնելի մեքենահանութեան և իր  
հրաշալի արդիւնքներուն յարասե  
տեսարանը գիտողին մէջ հիացումի,  
պատկառանքի զգացումը կ'արտազրէ  
նկատմամբ զայն՝ ստեղծագործող  
մարդկային հանճարին: Կը խորհի  
թէ ան մարդու մը գործն է, և, բարձր  
զաղափար մը կը կազմէ մարդկային  
մտքին վրայ: Կ'անդրադառնայ իր  
վրայ թէ ինքն ալ մարդ է, և, այս-  
պէս իր մէջ կը ստեղծուի ինքնայար-  
զանքի և ինքնավստահութեան ուժ  
մը ուր կը պարունակուին յառաջդի-  
մութեան սաղմերը: Կը սիրէ գիտու-  
թիւնը և, ասիկա արդէն մեծ ար-  
դիւնք մըն է:

Այսպէս է որ երկաթուղին կրնայ  
նկատուիլ մին մարդկային հանճարի  
ստեղծագործութեանց որոնց վրայ  
գիտութիւնը և վաճառականութիւնը  
կ'ապաւինին տիեզերական հայրենիքի  
խռչալի իրագործութեան համար, ու-  
րուն, անգիտակցաբար կը ձգտին:

Կը տեսնենք արդէն այն անսահ-  
ման յառաջդիմութիւնը զոր մարդիկ  
ըրած են այս ուղղութեամբ: Ժամա-  
նակէ մը ի վեր ականատես ենք աշ-

խարհիս հեռաւոր անկիւնները ձեռ-  
նարկող ազգերու մրցման պայքա-  
րին, իրարմէ խլելու համար, իւ-  
րաքանչիւրը իր հաշտոյն, երկաթուղ-  
ւոյ շինութիւնը: Շարժառիթները ըլ-  
լան ռազմական, ըլլան առևտրական,  
յառաջդիմութիւնն է որ կը շահի  
իրօք: Անդրսիպերական և անդրկաս-  
պեան գիծերը հիւսիսային և հարաւ-  
արեմտեան կողմերէն, Անկիւ-հնդկա-  
կան, Հնդկա-չինական, հարաւ-չինա-  
կան գիծերը հարաւային և արևելեան  
կողմերէն արդէն կը պարփակին եր-  
կաթէ անձուկ շրջանակի մը մէջ:

Իմանապէս Աղեքսանդրիայէն մին-  
չև Քափ երկարող և արեմտեան ար-  
ևելեան (չինուելու վրայ) գիծերը  
զիրաւ հատանելով, Ափրիկեան ցա-  
մաքը կը խաչաձևեն: Անհնար չէ  
նաև սպասել որ, մօտաւոր ազագայի  
մէջ, փոքր-Սիսի երկաթէ եռանկիւ-  
նի մը մէջ պարփակուի, զայն  
սահմանող երեք մեծ ծովերուն եր-  
կաթուղիներու միացմամբ: Հայաս-  
տան իսկ — եթէ երբէք կարելի է  
ենթադրել այսպէս առանց երաշա-  
տեսութեան — կրնայ, շնորհիւ ձեռնե-  
րէց յարասե կամքի, զօրաւոր զրա-  
մագլխի և քաղաքական աւելի նպաս-  
տաւոր պայմաններու, ծովային եր-  
կիր մը գտննալ, և, երկաթուղիներու  
շնորհիւ ստանալ գերազանցապէս բա-  
ցառիկ աշխարհագրական դիրք մը:  
Երեսակայեցէք զիմ մը որ պիտի երկա-  
րէք վանէն մինչև Պաղոտառ. ուրիշ մը  
էրզրումը պիտի կապէր Տրապիզոնին,  
վերջապէս երրորդ մը որ, Սեբաս-  
տիայէն, փոքր-Հալքի և Կելիկիոյ  
վրայով պիտի երկարէր մինչև Իս-  
կէնուէրուն: Այն ասան սա հրաշալի  
և հիանալի արդիւնքն ստացուած պի-  
տի ըլլար որ Հայաստանի սահման-  
ները պիտի մերձենային դէպ ի ծովե-  
րը: Այսպիսի գրութեան մը բազմա-  
գիմի հետեանքները գիւրաւ կ'երե-  
ւակայուին:

Այս ամենը մարդկային բնազան-  
ցական ըմբռնումներուն յեղաշրջու-

թիւնն է: Այս ամենը Միջոցին ու ժամանակին, Չափին ու Տարածութեան ջնջումն է. նիւթականին վերածումն է վերացականին: Այս հրաշագործ արդիւնքին չի յանգիր նաև ելեքորականութիւնը, որուն մուաքը սակայն թուրքիոյ հանրային ձեռնարկութեանց մէջ նոր կը սկսի Սըր Աշմէտ Էլիէթ Պարթէթի շնորհուած իզմիրի ելեքորական-թրամվէյի արտօնութեամբ:

Պիտի ըսե՛նք թէ մարդոց այս տենդոս գործունէութիւնը աշխարհը քաղաքակրթելու՝ լոկ յառաջդիմութեան բարւոյն համար է: Անկե՛ղծ են իրենց մարդասիրութեան, յառաջդիմականութեան բողոքներուն մէջ: Ինչ որ ալ ըլլան շարժառիթները, սա ստոյգ է որ ազգաց մասնաւոր շահերը քիչ անգամ անհաշա են ընդհանուր քաղաքակրթութեան շահերուն հետ:

Այս քաղաքակրթիչ երևոյթը, սակայն, արդի ընկերական կազմակերպութեան ամենէն անխուսափելի և անհնէն հետաքրքիր հետեանքներէն մէկն է որուն վրայ կ'արժէ պահ մը կանկ առնել:

Ընդհանուր կերպով, ունէ մարդկային ընկերութեան մը բարւոք մեքենականութեան և կանոնաւոր յառաջդիմութեան էական պայմանն է զործող ու զարգացող ուժերուն ներդաշնակ հաւասարակշռութիւնը: Արդ կը պատահի որ, իրերու կանոնաւոր ու ընական ընթացքին պատճառով իսկ որոշ ուժի մը տարապայման զարգացումը կամ գերաւատութիւնը խանգարէ հաւասարակշռութիւնը: Հետեանքը ընկերական կեանքին խառնակումն ու խանգարումն է: Առկից, հաւասարակշռութիւնը վերահաստատելու համար, կեդրոնախոյս ուժերու գոյութեան պէտքը:

Այս ընկերական երևոյթը կ'ընծայէ, — եւրոպական երկիրներէն մին առնելու համար — զոր օրինակ Գերմանիան:

Արգարև, մէկ կողմէն ընակշռութեան յառաջտուական անընդհատ աճումը, նկատելով ցեղին բազմածին կարողութիւնը, գիտութեանց արագ յառաջդիմութիւնը, և, ասոնց շնորհիւ, ճարտարարուեստին բոլոր ճիւղերուն ստացած թռիչք, վիթխարի մեքենաներու շնորհիւ արագ ու զերաւատ արտադրութիւնները, համալսարաններու դիւրութեանց և ցեղին մտաւորական ճաշակներուն պատճառաւ, մասնագէտներու ստուար բանակը, և միւս կողմէն, սպառումի յարաբերաբար սահմանափակ քանակութիւնը, պէտքերու, խնդրանքներու, պաշտօններու, սակաւութիւնը ինչպէս նաև զինւորականութեան յարաճուն տուրքերը՝ երկրին ուժերուն միջև հաւասարակշռութիւնը խզած են, և, այս անհամեմատութիւնն է որ օր ըստ օրէ աւելի կառաւորի կը դարձնէ գոյութեան կուրը, և կեանքը աւելի դժուարին աւելի կարծր կ'ընէ:

Այս շարիքին դարմանը պէտք է փնտռել գաղթային ծաւալման մէջ, և անոնք որ ուժ կուտան այս շարժման, կ'երևին լաւ ըմբռնած ըլլալ անոր ընդերական պէտքը:

Ընկերական պէտքն է որ իր կարգին, կը գծէ արտաքին քաղաքականութեան առջև այն ուղին ուր վեհապետը կը կեդրոնացնէ իր ճիգերը և կ'որոշէ այն նպատակը որուն պարտի ձգտիլ:

Այսպէս նաւային պիւտճէներու համար ահագին գումարներ կը քուէարկուին ազգային վաճառականութիւնը պաշտպանելու և զարգացընելու նպատակով. հեռաւոր երկիրներ կ'աշխարհակալուին, նորանոր վաճառանոցներ հաստատուելու, զբամազլիի գործածութեան համար ճարտարարուեստական ձեռնարկութեանց արտօնութիւններ ստանալու, մտաւորական և ձեռական անգործ Աշխատութեան՝ պաշտօններ ապահովելու և զբաղումներ հայթայթելու համար:

Արդ, Փոքր-Ասիա երկրացնգիս ամենէն կոյս երկիրներէն մէկն է: Այդ արգաւանդ ու գեղեցիկ մասերը առկաին զոց զաշա մըն են մարդկային զործնական հանճարին, ձեռներէցութեան և գործունէութեան առջև: Բնութիւնը կրնար, շնորհիւ իր ծոցին մէջ պարունակած անասման հարստութեանց, ապրեցնել տառնապատիկն արդի բնակչութեան, որուն ուժեր, բռնապետական յոռի վարչութեամբ մը կաշկանդուած, անկարող են, իրենց բնական զարգացման քաղաքակրթութեան նշանակած շաւիղով, և որ ընդհակառակը, թանձր սպիտութեան, մոլեռանդութեան և թշուառութեան անկենդան զանգուածի մը տրտում՝ պատկերը կը ներկայացնէ: Բարեբեր հողեր՝ անասման տարածութեամբ անմշակ, երկրագործութիւնը՝ նահապետական դրութեան մէջ, ճոխ ու կարևոր անտառներ՝ չը շահագործուած կամ չը պեղուած, ճարտարարուեստի արասդրութեանց մասին օտար երկիրներու գերի, ճամբաներու և հազորդակցութեանց դժուարութիւններ, և այս պատճառաւ, սոռուտըրը դանդաղ, բնական շահագործելի ուժերու ունայն սպառում. մէկ բառով երկրի մը բուրջ հարստութեանց սա երեք աղբիւրները, երկրագործութիւն, ճարտարարուեստ և վաճառականութիւն նախնական և յետագիւմական վիճակի մէջ — Ահա իր իսկական գիծերով Փոքր-Ասիոյ անտեսական իրականութիւնը, որուն աւելի մանրամասնեալ փերլումումը կրնար թելադրել ձեռներէց մտքերուն՝ շահագործութեան ծրագրի մը լայն զիծերը:

Այսպէս, Փոքր-Ասիա չէր կրնար ստարկայ չըլլալ, վերջապէս, եւրոպական ձեռներէց քաղաքականութեան, և, մասնաւորապէս Գերմանիոյ աւտոնական ախորժակներուն:

Մակայն, թուրքիա, քաղաքակաճապէս, բոլորովէն տարբեր կացութեան մը մէջ կը գտնուի քան ուրիշ

յետամնաց երկիրներ: Մէկէ աւելի փառասիրութեանց և ցանկութեանց ստարկայ, քաղաքական և անտեսական ընդդիմամարտ շահերու կրոււան, պարբերաբար վայրագ խրժժութեանց թատերաւայր, եւրոպական պետութեանց համար մշտական աղբիւր մըն է անհամաձայնութեան, և մնայուն վտանգ մը, Եւրոպիոյ զլխուն վրայ կախ, տիեզերական պատերազմի:

Նաև պէտք էր հաշուի առնել բնիկ տարրերուն մէջէն, այն քրիստոնեայ ցեղը, որ, շնորհիւ իր բարոյական և մտաւորական արժէքին, երկրին գերակշիռ տարրը կը կազմէր, և, քաղաքական աւելի լայն ու նըպատաւոր պայմաններու մէջ, կրնար անյաղթօրէն զիմապրել, տնտեսական հողին վրայ, օտար մրցումին:

Ռատի միակ քաղաքական ուղղութիւնը որ կարելի կը ներկայանար, պատեհատինդրութիւնն էր (opportuniste). հողը պատրաստել, և համբերել յաբմար առիթին:

Վիլհէլմ կայսեր առաջին ճամբորդութիւնը Պոլիս՝ զործնական սկզբնաւորութիւնն էր բարեկամական համաձայնութեան մը թուրքիոյ և Գերմանիոյ մէջ, զուս օգոտապաշտ նպատակով: Եւ դէպքերը այս նպատակին ամենանպատաւոր ուղղութեամբ մը քաշեցին մինչև հայկական առաջին շարժումները:

Հայկական դատին բացումով Գերմանիոյ համար կը ներկայանար պատեհ առիթը, և հողերանական վայրկեանը Սուլթանին համակրութեանց մէջ գերակշռութիւնը շահելու և Երլարը քէօշկի մէջ գերմանական ազդեցութեան հիմերը ձգելու համար:

Սուլթանը, իբր դարուս մեծագոյն սճրագործը հոչափուած՝ հայկական կոտորածներուն առթիւ, որոնք իր հրամանին գործադրութիւնն էին, քաղաքակիրթ աշխարհի տիեզերական զայրոյթին հաւանական պայթումէն ահաբեկ, և, թէպէս իսլամական մե-

լեռանդ կենսականութեան վրայ ապաւինած, նոր կորովի և յոյսի վերադարձ մը ունեցաւ շնորհիւ այն թանկագին բարեկամութեան, որ տարիներ առաջ կնքուած, հիմա, ընդհանուր ատելութեան մէջ, պաշտպանութեան հզօր ձեռք մը կը կարկառէր:

Այս զոհողութիւնը, զոր քրիստոնեայ կայսր մը կ'ընէր, հակառակ իր ժողովուրդին կրօնական հաւատքին, անհերքելի ապացոյց մըն էր Սուլթանին նկատմամբ տածած եղբայրական զգացումներուն անկեղծութեանը, և, մանաւանդ վերահաս վտանգին անհետացումը այնպիսի իրական ծառայութիւն մըն էր, որուն համար Սուլթանը յաւիտենապէս երախտագարտ միտքն կրնար ըլլալ: Այսպէս կը ստեղծուի Սուլթանին մէջ Գերմանիոյ զինուորական արժէքին նկատմամբ հիացումին քով բարի կամքի, հաճոյսկատարութեան բեղմնաւոր հոգ մը, զոր Գերմանիա աւելի կամ նուազ ճտրտարութեամբ կը շահագործէ տնտեսական ու գաղթային ծրագրին գործադրութեան համար:

Մինչև հիմա շնորհուած արտօնութիւնները սակայն, նախերգանքն են թուրքիոյ տնտեսական ամբողջական գրաւումին, որ, ինչպէս ցոյց կուտան թրանսպարտի և Ալեքիոյ յարաբերութիւնները, կրնայ ստեղծել քաղաքական իրաւունքներ երկրին գործերուն մասնակցելու. շահերուն պահանջած չափով և, նորանոր պէտքեր՝ վարչական բարենորոգումներու: Այսպէս Գերմանիա, նիւթական շահու պատճառով այսօր թուրքիոյ բարբրեկամ, վաղը՝ նոյն շահերուն համար քիչ հաւանական չէ որ դառնայ սնորթ թշնամին:

Ճ.

### ԳԱՆԻՐԷԻ ԸՆԹԵՐՅ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

Գահիրէի Ընթերցասիրաց ընկերութիւնը յունիս 29, հինգշաբթի գիշեր Ընպհ. Յուզով գումարելով ի մէջ այլոց մի քանի կարեւոր օրոշումներ բրաւ:

Նկատելով որ Ընթերցարանի արդի շէնքն ընկերութեան վրայ ահագին բեռ մ'եղած է իր վարձքին բարձրութեամբ և հետևաբար, արդեւք մը իր նպատակին գործադրման, որոշեց բոլորովին թողուլ այդ շէնքը: Առժամապէս յարմար վայր մը փախադրել իր ամբողջ գոյքերն, մինչև որ իր պիւտանէն ներս յանձնարին մէջ, կարենայ տեղ մը գտնել. այս կերպով ընկերութիւնը ազատած ըլլալով արտաքոյ կարգի ծախքէ մը, իր յարատևութիւնը բացարձակապէս ապահոված եղաւ, և որոշեց ամսական 5 դրուշի բաժանորդագրութիւն մը բանալ, որով կը յուսայ թէ Գահիրէի ամեն գասակարգի սահաստ, իր սիրայօժար մասնակցութեամբ պիտի նպաստէ ընկերութեան յառաջդիմութեան և զիբութիւն ընծայէ աւելի լայնօրէն գործադրելու ընկերութեան նպատակն, որ է Ընթերցասրահ մ'ունենալ և ձեռնտու լինել հայ աղքատի ուսանողաց գաստիարակութեան:

Յետոյ Ընպհ. ժողովոյ Դէւանի և Գործ ժողովոյ անդամոց հրատարականներն ընդունելով, նոր ընտրութիւն կատարեց և ընտրուեցան հետևեալ Տեսքը

#### ԸՆԴՀ. ԺՈՂՈՎՈՅ

- Ա. Ա. Տեհնապէտ Յովհաննէս Եազըճեան
- Ա. Ա. Տեհնադպիր Նազարէթ Աղազարո'
- Բ. Ա. Տեհնապէտ Աւետիս Ամիրայեան
- Բ. Ա. Տեհնադպիր Յակոբ Օհանեան

#### ԳՈՐԾ. ԺՈՂՈՎՈՅ ԱՆԴՈՍՔ

- 1. Յովհաննէս Տէլիբշեան
- 2. Երուանդ Աղամեան
- 3. Գ. Է. Ալվաճեան
- 3. Գ. Շանթունի
- 5. Երուանդ Աւագեան

Երկու շաբաթէ ի վեր գոյցուած են դռներն ու պատահաններն այն շէնքին որ՝ Հալիմ փաշայի հոյակապ կալուածներէն ոչինչ հեռի՝ կողմնական լուսնիստ փողոցի մը մէջ կը նայի

X

էզպէքիէի պարաէզին վրայ, ու ո՛չ որ կ'երևի այլ ևս անոր պատշգամին մէջ՝ ուր փոխադրուած է կարծես փոքրցի ամայութիւնը:

Եթէ սնանկացող վաճառականի մը կամ անժառանգ մեռնող կալուածատիրոջ մը պատկանէր այդ շէնքը, ի հարկէ բոլորովին անտարբեր պիտի մնայինք այդ փակման հանդէպ՝ առանց ամենափոքր յուզում կամ վիշտ զգալու: Սակայն երբ կը խորհինք թէ այդ միւսնոյն շէնքը հայոց կը պատկանի, Ընթերցասիրաց Ընկերութեան հիմնած Քշիւպն է այն որ այնքան եռանդով ու այնքան զոհողութեամբ հիմնուելէ յետոյ՝ այնքան անփառունակ ու անշշուկ վախճան մը կ'ունենայ, դժուարաւ կը զսպենք արցոյնքը մեր աչքերուն մէջ և ամօթի շահագունանքը մեր երեսին վրայ, ու խորին վիշտով մը կը համակուինք եզիսրոահայ գաղթակաւնութեան անպատուաբեր այս Իրեւոյթին առջև:

Այս վիշտը աւելի դառն ու աւելի խորունկ է մանաւանդ անոնց համար որ դեռ թարմ ու վառ կը պահեն իրենց սրտին մէջ յիշատակը այն օրուան որ եռանդալից ոգևորութեամբ ու խուան բազմութեան մը ներկայութեան կը կատարուէր հայ Ընթերցասրահի բացման հանդէսը, կ'արտասանուէին պերճիմաստ բանախօսութիւններ ու կը պարպուէին շամբանիայի բիրեղեայ սրբատաշ ըմպակներ՝ նորահաստատ Ընթերցատան յաջողութեան ու յարատեւութեան համար սրտարուխ ու անկեղծ բարեմաղթութիւններով:

Այն օրէն ի վեր մօտաւորապէս չորս տարիներ անցան սահեցան ու հայկական Քշիւպը մերթ յուսալից ու մերթ վհատեցուցիչ շրջաններէ անցնելով՝ վերջապէս եկաւ հասաւ այն վիճակին ուր, ինչպէս կը ծանուցանէ Պատ. Գործ. Ժողովոյ պաշտօնական յայտարարութիւնը, կը ստիպուի առ ժամապէս զազարիլ

գոյութիւն ունենալէ, թէև Ընկերութիւնը կը մնայ կանգուն և բաժանորդութիւնը կը շարունակուի ըստ առաջնոյն:

Սակայն առ ժամապէս բացատրութիւնը, զոր չենք կարծեր թէ Պատ. Գործ. Ժողովը գործածած ըլլայ Երևոյթները փրկելու համար, ըստ մեզ չկրնար փոխել տխուր ու ցաւառիթ իրականութեան բնութիւնը. փակումը միշտ փակում է՝ ըլլայ առ ժամեայ, ըլլայ առ յաւէա. խընդիրը հոն է որ ունէ կերպով այդ փակումը հարկեցուցիչ ընող պատճառներ պէտք չէին գոյութիւն ունենալ, և Ընթերցատունը պէտք էր մնար կանգուն ու յարատեւ ինչ որ չէ՝ այսօր դժբաղդարար:

Այսպէս խօսելով մեր նպատակը չէ պատասխանատուութիւնները ճշգրել կամ Ընթերցատան վարիչներուն ուղղութիւնը քննադատել ու անոնց անձուէր ջանքերն ու զոհողութիւնները կասկածի ներքե թողուլ: Արդէն առհասարակ մէր բոլոր հանրօգուտ հաստատութիւնները, ձեռնարկութիւնները կամ ընկերութիւնները կարծես ճակատագրապէս վիճակուած են՝ աւելի կամ նուազ տեղողութիւնէ մը յետոյ՝ զազրելու կամ լուծուելու դժբաղդ վախճանին, այնպէս որ այդ տխուր վախճանը յառաջ բերող շարժառիթներու մասին անկարելի է բարոյապէս այս կամ այն եզրակացութեան հասնիլ, այլ պարզապէս նախասահմանեալ անխուսելի վճռի մը գործադրութիւնը նկատել:

Միայն քանի մը զիտողութիւններ ունինք ներկայելու այս առթիւ ինչ ինչ կէտերու մասին՝ որոնք թերևս անուղղակի կերպով պատճառ եղած են իրաց ներկայ ցաւալի կացութեան:

Նախ՝ անունի շիտթութենէ առաջ եկած անպատեհութիւն մը. գիտենք թէ ինչ կը հասկցուի Քշիւպ կամ Սէնթըր բառերով օտարազգի ու նաև մեր ազգի հասարակութեան մէջ.

ընդհանրապէս Քրիստոսը զբօսական ժամանցի վայր մը նկատուած է ուր կը յաճախեն ընկերական դիրքով համաստիճան անձեր՝ ամսական կամ տարեկան որոշ տուրք մը վճարելով իբր անգամ՝ Քրիստոսի որու զոնները զոյց են միջին կամ՝ աղքատ դասակարգին պատկանող անհասներու առջև։ Արդ, հայկական Քրիստոս ոչ իսկապէս քրիստոս էր և ոչ իսկապէս ինքնաբերական, այլ ստէպ թէ՛ մին էր և թէ՛ միւրը. կամ ոմանց համար քրիստոս ուրիշներու համար ընթերցարան. անոնք որ՝ աւելի կամ՝ նուազ դիրքի տէր՝ իբր քրիստոս կը յաճախէին հոն և անդամակցութեան տուրք կը վճարէին, իրենց արժանապատուութեան կամ՝ ազնուականութեան (?) դպչող պարագայ մը կը նկատէին միջին կամ՝ աղքատիկ դասուն պատկանող հայերուն կամ երբեմն իրենց ստորակարգեալ պաշտօնեաներուն, մինչ այս վերջիններէն ոմանք վիրաւորուած առաջիններուն ազնուականի խուլ ու արհամարհոտ յոխորտանքէն՝ ասելութեան զգացում մը կ'ունենային անոնց նկատմամբ. ոմանք ալ իսկապէս անփորձ ու անպէտ՝ կենցաղագիտութեան տարրական կանոններուն՝ չկրնալով պահել փոխադարձ պառչածութեան սահմանները իրենց ու անոնց միջև, մտերմական յարաբերութիւն հաստատելու միամտութիւնը կ'ունենային անոնց հետ և ասկէ կը հետեւէին լռելեայն վշտացումներ և ապա հրաժարումներ։

Երկրորդ անպատեհութիւն մը կամ սխալ մը եղաւ ջնջել ամսական 5 դրուշի բաժանորդութիւնը, որով կարեւոր գումար մը պակասեցաւ ինքնաբերական Գիտօճէէն, պակասելով նաև յաճախողներու թիւը, բայց արդար ըլլալու համար ըսենք նաև թէ՛ այն խումբ մը երիտասարդները, որոնք հաւաքական խնդրագրով մը դիմած էին վարչական խորհրդոյ այս նոր կարգադրութեան դէմ բողոքելու և

խնդրելու 5 դրուշի բաժանորդութեան դրութիւնը, նոյն իսկ այնպիսիներէն որ ամիսներէ ի վեր սուր չէին կուխեր ինքնաբերական և կը դժկամակէին վճարել իրենց դիզեալ բաժնեգինները։

Երրորդ կէտը զոր կ'ուզենք նշանակել՝ այն անփութութիւնն է զոր ունեցաւ հետզհետէ իրարու յաջորդող վարչութեանց անդամներուն մեծագոյն մասը՝ իր պաշտօնի և պարտաւորութեան կատարման մէջ. միշտ խոյս տալով գործօն մասնակցութենէ ու աշխատութեանց բոլոր բեռը ծանրացնելով իր ընկերներէն մէկ երկու հոգիին վրայ, բաւական սեպելով ամիսը անգամ մը կամ երկու ներկայ դոնտիլ ժողովոյ նիստերուն։ Ընական է որ այսպիսի անպարպարտաճանաչ և աշխատութենէ փախչող վարիչներու ընթացքը մեծապէս նպաստէր հոստատութեան կազմի ի կազ գնացքին և ապա յետագիւմութեան։

Չորրորդ և զլիսատը պատճառ այս վշտառիթ կացութեան՝ եղած է հայ հասարակութեան անտարբերութիւնը և ընթերցասիրութեան փափաքին բացարձակ պակասը, զոր չքմեղելու համար առաջ բերուած առարկութիւնք բոլորովին անտեղի են և որ արժանի է ամենախիստ պարսաւանաց։

Հիմա եղածը եղած է. պէտք է այսուհետև փորձառութիւնը առաջնորդ ըլլայ վարիչ մտավորներուն և միւս կողմէ անխտիր ամեն դասի պատկանող հայերը նիւթապէս և բարոյապէս նաև անկեղծօրէն աջակցին հայ ընթերցասիրութեան վերականգնելու համար կատարուելիք ջանքերուն։ Պէտք է մէկ կողմ թողուլ հակառակութեան, կուսակցական անշահ նկատումները, համոզուած լինելով որ հայ ինքնաբերական պատիւը ամբողջ եզրիպատահայ գաղթականութեան պատիւն է զոր պէտք է բարձր բռնել օտարազգի հասարակութեան մէջ։

Ա.

ԲԱՆՏԸ — առ Ա. Վ.

Ո՛վ ցաւերուս դու ըսփոփիչ, խնդրեմ, ի՛մս  
 Արամ,  
 Հսէ՛ ինչո՞ւ այդ ամպերը թամօր ու խուռ-  
 ներամ,  
 Դէմքըդ տըխուր, ինչո՞ւ մըրուր քամէ քու  
 հակատ,  
 Է՞ր սրտիկըս կը խոցոտես նայուածքով վը-  
 հատ:

Պատահաւր սլաղ քու լըտութեան վաղմւց  
 գիտեմ ես,  
 Չէ՛կարելի որ ծիծաղիս, քանի՛ ըմբատումես.  
 Խաւար խորշին խորը՝ խաւար են սիրան ու  
 հոգին,  
 Տարակոյսը կ'որջանայ հոն. ճիւղով մո-  
 լեզին:

Թա՛նտ, խոր ու վեհ խորհուրդներու դու  
 մեղ գերեզման,  
 Անէծք գլխուն հըմարողին կայք մը քեզ  
 նման.  
 Քանի՛ տեսնեմ քու պիղծ սլառներ, ո՞հ, կը  
 ցընորիմ,  
 Կը խորհիմ որ կեանքըս կրծող որդն ես ոխն-  
 ընմ:

Ներէ՛, Արամ, մերէ՛ լեզուիս, բանտի ցըզ-  
 մաւոր,  
 Ահա կուտան քեզ իրաւունք, աչքս արտառ-  
 ուաթոր.  
 Ներէ՛, սրտիդ վէրքը տեսայ, անդունդ մը  
 կեանքի,  
 Կեանք մը բանտի սրտիկումներու, ամբողջ  
 հինգ տարի:

Թանտի կեանք մը, չորս որմերու մեղ շըր-  
 շափակում,  
 Երկաթի կուռ շղթաներու շոխնդ, շառու-  
 չում.  
 Ըղեղիդ խորը դռնջեցին, ըմկե՛ր փարեւի.  
 Փակ դռներու ետին խնդա՛լ, ո՞հ չէ կարելի:

Ձրկեալներու երամին մէջ կ'ապրի՞ր, ի՛մս  
 Արամ,  
 Եկ, ուխտ ընենք զրկեալներու ըլլալ բա-  
 ընկամ.  
 Հո՛ս, որք այրի, պամդուխտ, աղթատ եմ  
 անթըլելի,  
 Լաց կոծն անոնց լըսել ամլաց, ո՞հ, չէ կա-  
 ընլի...:

Բայց լաւ մայէ՛, փըշուտ է այդ ճամբան,  
 շատ փըշուտ,  
 Ջրկողներու Դասակը մեզ կը զըրկէ շատ  
 շուտ.  
 Աքսոր, բերդ, բանտ, գետակ, ծով, թոյն,  
 թուր ու կախողան:  
 Մեզի բաժին սլիախի համէ դարուս Դատաս-  
 տան:  
 12 7/93 Ս. ԲԻՒՐԱՏ

ԿՐՕՆՔ ԵՒ ԱԶԳԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Մի քանի ամիսներ առաջ բաժա-  
 կածառի մը առթիւ Գերմանիոյ կայս-  
 րը բառ թէ « Բարի քրիստոնեայ  
 չեղող անձ մը ճշմարիտ ազգասէր  
 չի կրնար ըլլալ »: Թէև Գերմանիոյ  
 վեհապետին բողոքովին համակարծիք  
 չենք այս գիտողութեան մասին, սա-  
 կայն անոր մէջ ճշմարտութիւն մը  
 կը նշմարենք: Կրօնքը՝ որուն գերն է  
 սոցիւն և բարոյական նկարագիր պատ-  
 ըաստել, անուղղապէս ազգասիրու-  
 թեան սգին կ'արծարծէ իր հպատակ-  
 ներուն սրտին մէջ: Այս ճշմարիտ է  
 մանաւանդ քրիստոնէական կրօնքին  
 նկատմամբ որուն հիմնադիրն ինք  
 ջերմեամբ ազգասէր մըն էր: Քրիս-  
 տոնէութեան կէտ նպատակին չէ ար-  
 դարև ալ զի մը առժամանակեայ խըն-  
 գիրներովը զբաղել, սակայն իր պաշ-  
 տօնին բերմամբ անհատից բարօրու-  
 թեան նպատակարար միջոցներ կը հայ-  
 թայթէ: Ինչ որ մարդկային ընկե-  
 րութեան կը պատկանի, կրօնքի երա-  
 ւասութեան տակ կ'իյնայ: Ազգասի-  
 րութիւն — ինչպէս ուրիշ բազմաթիւ  
 լաւ յատկութիւններ — քրիստոնէու-  
 թեան անհրաժեշտ արգիւնքն է:

Ազգ և կրօնք, թէև իրարմէ տար-  
 բեր ուրոյն հաստատութիւններ, իրա-  
 րու լրացուցիչներն են: Առաջինը  
 սարգուս բնական և ընկերական վի-  
 ճակէն առաջ եկած, իսկ երկրորդը  
 Աստուծմէ արուած և յայտնութեան  
 վրայ հաստատուած է: Ռ'րչափ ցաւ-  
 ւալի է տեսնել որ կան սակաւին մեր

մէջ գրողներ որ այս երկու հաստատութիւնները իրարմէ չեն կրնոր զանազանել: Պէտք է կրկնել այն շատ անգամ յեղյեղուած խօսքը թէ կրօնքը ուրիշ է ազգը ուրիշ է: Այս երկու հաստատութեանց իրարու հետ շփոթելուն արդիւնքը սա եղած է որ յաճախ ազգին մեծամասնութեան դաւանանքէն տարբեր համոզում ունեցողներ՝ իբր ազգանենդ և դաւաճան մատնանիշ եղած են: Բարիշ ինչպէս կարելի է հասկնալ սա դիտողութիւնը թէ «կրօնափոխ մը իր հարազատ ազգին ուժէն մաս մը կարգելով զայն կը տանի օտարին»: Ինչ տրամաբանութիւն: Ինչ եզրակացութիւն:

Կրօնք մը որչափ մաքուր և ազատական ըլլայ այն աստիճան կը զօրացնէ ազգասիրութեան ոգին իր հետեւողներուն մէջ: Առ հասարակ կրօնքները երկու մասի կրնանք բաժնել. ժողովրդական և քահանայապետական: Երբ կրօնք մը քահանայավարական է, այսինքն, կրօնքի սկզբանց կիրառութիւնը սոսկ քահանայից և եպիսկոպոսաց ձեռքն է, այդ կրօնքը բնականաբար տիրապետական գիրք մը կը բռնէ և անոր իրաւասութեան տակ՝ ժողովուրդը ստրուկ, սգէտ և սնապոշտ վիճակ մը կը ստանայ: Հարկ չէ ըսել թէ այս կացութիւնը ինչ աստիճան վնասակար և վտանգաւոր է ազգային կենաց. իսկ միւս կողմէ ժողովրդական կրօնք մը կը ներշնչէ իր դաւակները աշատութեան, յառաջդիմութեան և անկախութեան զգացումներով:

Առ այս համոզուելու համար բաւական է տկնարկ մը նետել Եւրոպայի տարբեր յարաբերութեանց պատկանող ազգերուն վրայ: Ինչ մեծ է Անգլո-Սաքսոն և Լատին ազգաց միջև եղած տարբերութիւնը: Մին բողոքականութիւն դաւանողը, անոր կենդանաբար և առողջ միջնուրրտին մէջ կը յառաջանայ հսկայ

քայլերով. իսկ միւսն, Հռովմական՝ քահանայավարական ստրկացուցիչ բուժին տակ կը հիւժի և չափազանցութիւն չէ ըսել թէ այն ազգերէն ոմանք, ինչպէս Սլաւոնիացիք, մահամերձ վիճակի մը մէջ կը գտնուին այսօր: Ինչ է այս ահագին տարբերութիւնը յառաջ բերող զօրութիւնը: Հին աւանդութեանց և սովորութեանց չափազանց կարեւորութիւն սալը նախանձատ պահպանողականութիւն մը և հետեւաբար անձուկ և յետադէմ գաղափարներ կը յղանայ:

Բողոքականութեան տարրոշ հանգամանքներն են, ինչպէս բան իսկ կը յայտնէ, ազատութիւն, խաղարկութիւն, և յառաջդիմութիւն: Սա որչափ ազատական յարանուանութիւն մըն է ընդդէմ պահպանողական դաւանանքներու, ինչպէս են պապական, օրթօտօքս և բուսաւորչական եկեղեցիներն: Անոր դերը միշտ եղած է Աւետարանին զուտ և կենսական ճշմարտութիւններուն վրայ հաւաքուած անպիտան և վնասակար աւերորդապաշտութիւնները յօտել և ժողովուրդները յետս կոչել կենաց ջուրին հարազատ և անապակ աղբերակին: Այժմն դիտող անձ կրնայ տեսնել թէ բողոքականութիւնը մեր ազգին մէջ մուտ գանելէն ի վեր հոն յառաջդիմական շարժում մը սկսաւ — շարժում մը կրթական, եկեղեցական և ազգային: Այժմեիկացի անգլիացի միսիոնարք — որոնց վեհ շարժառիթը կասկածէ վեր է — մեր մէջ գալով՝ կրօնական դաստիարակութեան հետ մէկտեղ, սկսանայ մեր մէջ մուծանեցին նաև իրենց արևմտեան յառաջդիմական գաղափարները: Միայն ազխտութիւն է տմբաստանել միսիոնարք իբրև թէ «կրօնային քարոզութեանց բողին տակ՝ բազաքական ազգեցութիւն կը ստանան օտար երկիրներու մէջ»: Բանի բանի՝ անգամներ միսիոնարք իրենց կառավարութեան ընդդիմութեան հակառակ անձնուիրաբար իրենց դոբ-

ծը շարունակելու ճգնած են օտար երկիրներու մէջ: Ապերախտութիւն է անոնց այսպիսի անարժան շարժառիթներ վերագրել:

Ճշմարիտ է թէ վերջին կոտորածներու միջոցին կառավարութիւնը միեւնոյն վարմունքը չունեցաւ հոնդէպ մեր ազգին մէջ գոնուած զանազան եկեղեցիներուն. սակայն ո՞ր մարմին աւելի փաստեցաւ այս աղէտներէն: Յայտնի է թէ Հոովմէականք կառավարութեան բացարձակ հրամանովը պաշտպանուեցան. բայց ո՞ր քաղաքի Աւետարանականք այս պաշտպանութիւնը վայելեցին: Ընդհակառակը Տաճիկ խուժանը տարածուեցաւ թաղերուն մէջ և անխորաբար շարժեց թէ՛ Բող. և թէ՛ Լուս. Հայերը: Աւելին կայ: Մեր ազգին մէջ յեղափոխական շարժումը սկսելէն ի վեր կառավարութիւնը ուշի ուշով կը հսկէ բողոքական հասարակութեան մէջ գոնուած Գոլէճներու վարժարաններու և եկեղեցիներու շարժումները: Անոնց հովիւ և բրոֆէսորները ուրիշ որեւէ դասակարգի ազգայիններէ աւելի վտանգի ենթարկուած են: Մինչ զի կայ պապական կղեր մը — ինձ ծանօթ — որ քաղաքական խնդիրներու համար զժուարութեան բախած ըլլայ կառավարութեան կողմէ, կան բողոքական Հովիւ և Բրոֆէսորներ տասնեակներով որ իրենց աշխատիքական եռանդով նշանաւոր հանդիսացած են ազգին առջև և կառավարութեան բուն հարձանքներուն ենթարկուելով, ազգին սիրոյն համար մահուան դատաւճիռ, աքսոր և բանտարկութեան պատիժներուն արժանացած են: Մինչ իսկ Մայր Եկեղեցւոյն պատկանող հոգևորականք իրենց թուոյն ստուար մեծամասնութեան նայելով այս մասին խիստ ստորին տեղ մը կը բռնին:

Ուստի, ակներև է թէ բողոքականութիւնը մեր ազգին մէջ ոչ թէ փաստակար այլ ընդհակառակը ազգը իր դարաւոր քունէն արթնցնելու,

միջին և խաւար դարերու կարգ մը Հայրապետաց և վարդապետաց — որոնց մեծ մասը օտար ազգերու զաւակներ են, ինչպէս Յոյն և Ասորի — փառած և նեխած կամայական վարդապետութիւնները մի կողմ՝ թօթափելու, Արևմտեան ո յառաջդիմական գաղափարներ ներշնչելու, ազատ խորհելու և զործելու մարդկային բնական իրաւունքը մեզ սորվեցնելու, ուսման և գիտութեան յարգը ճանչցընելու, մտաւորական զարգացման, ի մի բան մեզ երոպական քաղաքակրթեալ ազգաց հետ յարաբերութեան մէջ դնելով դէպ ի կատարեալն յառաջխաղացող ահագին հոսանքին հետ խառնելու նպատաւորող տարբերէն մին եղած է:

ՊԱՏՈՒԵԼԻ  
Մ. Յ. ԳՆԱՃԵԱՆ

Առանց համալիր ըլլալու Պատուելի Յօդուածագրին գաղափարներուն, անկողմնակալ սգով հրատարակեցինք սոյն յօդուածը նոյնութեամբ, որուն պարտապաշտած պատասխանը յաշարդ թիւին մէջ պիտի դտնեն Պատուելի երցողները:

Խ.

ԳԱՆՆՐԷԻ ՀԱՅՈՒԹԻՒՆԸ

(Շար. Ասխորդ թիւէն եւ վերջ)

«Իսկ երիտասարդութիւնը, կը յարէր յիշեալ հայրենակիցը, Գահիրէի մէջ բոլորովին անտարբեր այս ամենուն հանդէպ, ինք ևս օտարամուլութեան թանձր մթնոլորտին տակ աչքբաց խորունկ քուն մը քոշելով, ապագայ երջանկութեան մը, ազատութեան մը վայելումն երազել կը կարծէ: Նա այսպէս տարհամոզուած է թէ՛ բարեկիրթ, հայրենասէր երիտասարդ բուռելու համար, անպատճառ պէտք է առ նուազն եւրոպական երկու երկր լեզուներ զիտնալ ու անոնց դըլ-


խարհները կրել (այս, օրինակել եւրոպայոց սրտաքինը միայն, իսկ ներքինը ոչ, սրտհետե հաս հայրենեաց սերը կը պահանջուի, ու անոր համար անձուիրութիւն պէտք է ուխտել մեզայ Աստուծոյ ըսէ՛) և զանոնք սորվելու, ունենալու համար սրչափ դրամ մտնէ, հայտ է — ի՛ր ըսեր երբէք անոր թերթի մը բաժանորդ գրուէ՛, ընթերցանութեան համար, և կամ ազգային ս՛կէ հաստատութեան մը ամսական 4—5 դրչ տ՛ւր, իսկոյն գողը կը բռնէ և պոզ պազ կը պատասխանէ «Ժամանակս չի ներեր», (կ ուզես ժամանակը բառին բուն իմաստով ըմբռնէ, կ՛ուզես դրամն ժամանակ հասկցիր, անանկ է ետ՛ հաճոյքին, զեղիութեան . . . ժամանակները շատ շատ կ՛անցնին) ու ակնցով ու սիկարէքով օգի մէջ մարդ-միրքոպները գիտելով, ձեռքի գաւազանը ճօճելով կ՛անցնի կ՛երթայ առանց նոյն իսկ իր խօսակցին մնար բարով մը ըսելու։ Կարծեմ ասոր համար է Պարոն որ երբ մի քանի անգամ, սրովհետե տեղոյ օտարն եմ, ինձ պատահեցաւ, հետ սքրքրութիւնս շարժող բաներ ու մրոյ տեղեկութիւններ ստանալու համար որեւէ մէկուն կամ երիտասարդին ներկայանալ, բարևներս միշտ ճօշխօշներով ու աւիստներով պատասխանուեցան (բացառութիւն շատ քիչ կայ, այնպէս որ մէկիկ մէկիկ կրնամ համբել) եկեղեցին ըսես հոն ալ միւսնոյն բանը տեսայ, սա առաւելութեամբ թէ պոչը թուրքերէն մ՛ալ աւելցուած կայ. բայց անոնցինչ ըսես, երբ չուրը ակէն պղտորած է, բռնէ քաղաքական, անտեսական ժողովի անդամներէն մինչև յետին անհատ մը, կարծես ասոնք ամենքն ալ ուխտած են հայ բառը իրեն յետագաս մասնիկներով արտաքսել իրենց բառարաններէն. ես որ շատ մը քաղաքներ պտղտած եմ, մեզքսինչ պահեմ, գեա Գահիրէի հայութեան, մանաւանդ երիտասարդութեան նմանը չտեսայ»։

Այո՛, իրաւունք ունի մեր ազնիւ Հայրենակիցը. տեղոյս երիտասարդութիւնը՝ Հայաստանի երջանկութիւնն ու ազատութիւնը կը տեսնէ ցերեկը օդին իսկ գիշերը երազին մէջ՝ և չգիտեր կամ չուզեր զիտնալ թէ՛ կրականութիւնը երեւկայութեան և երազին մէջ չկայանար երբէք. կոյր զկուրայն, եւրոպական մեզ ծաղրող, կեղեքող, գրամնիս կորզող բաները միայն կ՛օրինակէ, անոր արտաքին կեղծ քաղաքականութեան ձեւերէն խաբուելով՝ կ՛անգիտանայ «Օտարներէն չկայ յոյս»ը. նա չխորհր երբէք թէ՛ եփուած կերակուր մը վայելելու համար պէտք է նախ զայն եփող տարերքը պատրաստել, ազա՛ երբ եռալ սկսի հսկել, հոգ տանիլ որպէսզի շաւ սեղն աւնէ, ինչպէս կըսէ զաւառացին։

Երբ կերակուր մը որ մարմնոյն սրնունդ կուտայ լոկ ու եթէ լաւ չպատրաստուի, վնասակար է, ս՛րչափ աւելի ինամօք պէտք է պատրաստուի, զատ տնարակուի երիտասարդութիւն մը որ վնասակար չըլլայ, ընթերցումի, մայրենի կրօնի, լեզուի ու ցեղի սէրը վառ պահուի անոր մէջ, որ ս՛չ միայն մտաւորականը, բարոյականը կը սնուցանէ, այլ ամենանուիրական, ամենասուրբ բանի մը, Ազատութեան վառելանիւթն ու աղը կը կազմէ. երիտասարդութիւնը՝ զայն արտադրող տարրը, իսկ միջտվայրն՝ ամանը, բացարձակ է այս։

Ինչո՞ւ ուրեմն չ՛եռար Գահիրէի երիտասարդութիւնն ալ երբ հայ թերթերը կ՛արժարծեն կրակն ու ամանն ալ լաւ հաղտրդիչ է, այսինքն հոն, ամեն միջոցներ կան ազգասիրական ոգին ու եռանդը միշտ վառ պահելու։

ԳՊՐՈՅԱԿՍՆ ՄԸ



# ԻՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԷՆ

(Ե Ա 40)

— Ուսկից, Երբ եկաք:  
 — Այնժամ պէն, Սրբազան, հոս ուսուցիչ էի, արձակուրդէն օգտուիլ ուզեցի, ուխտի եկայ հոս:

— Լա՛ւ, սիրելիս, ուխտերնիդ բնորոշուած կան, բայց չէ՞ք գիտեր որ ժամանակը շատ փափուկ է, մանաւանդ բանի մը շարաթէ ի վեր:

Բայց, Սրբազան Հո՛յր, ժամանակի փափուկութիւնն իմ ուխտին ինչ արգելք կրնայ բուլ. ես ուխտ բրած եմ գալ Ս. Աստուածածնի սօրքը, և, — ըիչ մը վարանելով — ներեցէ՛ք, որ սիրտս բանամ:

— Համարձակ խօսեցէ՛ք, գաւա՛կս, հոս վանք է, մի՛ վախնաք, լրանս չկայ, մի՛ բաշուր:

— Ծնորհակալ եմ, — կասկածոտ նայուածներ պատշնելով — ես հոս եկած եմ վարդապետ ձեռնադրուելու համար. վէրսանկորիսն ես եմ, մանկութենէս ի վեր սիրած ու պաշտած եմ Զէյթունն և ահա բաւասուն երկու տարեկան հասակիս մէջ կը հասնիմ փափաքիս, հոս եկայ, այսուհետեւ, ձեռքս քաշած աշխարհին բոլոր սուսուփուտ հաճոյքներէն, պիտի ազդուիմ վանքի մինիկ ու խաղաղի՛ կեանքը, ազմայններէն ու ցաւերէն մեկուսի, պիտի թաղուիմ բնիկերցուհներու մէջ, պիտի աղօթեմ, հսկեմ, բնանամ, վերջապէս վանական կ'ուզեմ ըլլալ: »

Այս խօսակցութիւնը կը գտնար Զէյթունի Ս. Աստուածածնի Մենաստանին մէջ, Տ. Կ. եպիսկոպոսին ու վէթանուրի կոչուած վրձնէն վարձապետ Գրիգորեանի մէջ: Առաջնորդին սենեակն էր, դուռը կէս բաց, Սրբազանը բազմեցին վրայ, բարձի մը կը թնամ, իսկ վարձապետը հասարակ աթոռի մը վրայ, խոնարհ ու հեղուկ զեմքով մը կը ծկըած: Այս միջոցին ներս մտաւ փոքրատար կրկանահասակ ու խոշոր մարդ մը, եկաւ Սրբազանին աջն առաւ, ու քանի մը քայլ ետ ետ երթալով.

— Սրբազան, ըսաւ, Օսման չարտոշն եկած է, վարը կը սպասէ, ձեռքը խոշոր պահարանով նամակ մը, կ'ուզէ զԶեյ սենեկ:

— Ըսէ՛, թող գայ, — փոքրատարը մեկնեցաւ. եպիսկոպոսին սիրտն արագ արագ զարնել սկսաւ. հազար բանի կ'երթար միտքը. Օսման չարտոշը Զէյթունի լրտեսն էր. կէս օրուան տաքին, ինչ բան ունէր, քաղաքէն մինչև վանքը գալու, 20 վայրկեանի ճամբան մագլցելով. արդեօք նոր անակնակ մ'էր: Ուստի, շատ մը նշան ըլլաւ վարձապետին, քովի խուցը քաշուելու, գոռը վրան փակելու, և ան բրաւ: Սրբազանը մինակ, բազմեցին վրայ, ինք ինք ժողովեց ու պատրաստուեցաւ բնորոշելու հերքը, որ եկաւ, եպիսկոպոսին աջն առաւ ու զեմք բարեւ բանելով.

— Տէ՛ր, այս գրութիւնը, ըսաւ, Սալիհ բաշայէն է, պատասխան ուզեց անշապաղ:

— Ինչպէս է ինք, ինչ կ'ընէ, Զօրանոցէն իջա՛ւ քաղաք:

— Ո՛չ գեւ, բայց կարծեմ թէ վաղն իջնէ, որովհետեւ կ'աճապարէ Մարաշ վերադառնալու:

— Ծատ ըաւ, բարեւ ըրէք, պատասխանն իրիկուան զեմ կը զրկեմ:

Ոստիկանը դուրս ելաւ, եպիսկոպոսին գոյնը դալուկ մ'առած էր ու մօրուքը ձեռքին մէջ, սկսաւ խորհիլ. նամակը բացաւ, տաճկերէն էր, որ իրեն չէր խօսեր, և գոր կարգաւ տալու համար Զէյթուն իջնելու էր: Բարեբաղդաբար, քովի խուցը քաշուող վարձապետը միտքն ընկաւ, կանչեց ու նամակը տալով.

— Կարդա՛ նայինք, ըսաւ, ինչ կ'ոտնայ սա ձեր պայքը:

Վարձապետին աչքերը ա՛յար էին, ակնոցը դրաւ, և հազիւ մէկ երկու տող քաղած էր թուղթը ձեռքէն, ինք ալ նստած աթոռէն վար ընկաւ խերսկորոյս...:

Այս պահուն ի սպէն ըլլալու էր նկարագրելու համար երեսները կախ, աչքերը մարմիրուն, շրթունքը զեղնած, արձանացած վարձապետը, որուն շուրջը թափոր կը գաւնար խեղճ եպիսկոպոսը շուրտած: Այսպէս անցան քանի մը րոպէներ, մինչև որ, գանազան զօբաւոր պարմաններու շնորհիւ ուշքը վրան բերուեցաւ նորեկ ուխտաւոր տիրացու վարձապետին, որ, չէր կրնար կարծես աչքե-



ուիմ ու կը խնամուիմ վարագայ Որբանոցին մէջ: Այս ազգասիրական ձեռնարկը շնորհաւորելով սրտագին՝ կը յուսանք և կը մաղթենք որ ունենայ իր հետեւողները միւս ազգայնոց մէջ, որոնց բնագաւառներն ո՛չ նուազ կը կարօտին որբախնամ ձեռագրու:

Սոյն նորակազմ ընկերութեան կանոնագիրը խմբագրուած և ղիւանը կազմուած է, մանրամասնութիւնք Հանդիսիս յաջորդ թիւին մէջ պիտի հրատարակուին:

— Հետեւեալ նախկը կը հրատարենք սիրով, յաջողութիւն և յարատեւութիւն մաղթելով «Արշալոյս» ին, որ, կը սիրենք հտւատալ, եզրիւտարմահի հայութեան մէկ պահասը պիտի լրացնէ:

«Տէր խմբագիր»

«Կը խնդրուի Պատ. Հանդիսիդ միջոցաւ ծանուցանել թէ առաջիկայ Օգոստոսի սկիզբէն, շաբաթը երկու անգամ, պիտի սկսի հրատարակուիլ «Արշալոյս» անուն մեր թերթը, ազգային, զրական և քաղաքական պարունակութեամբ:

Բացուած է քաթանորդագրութիւնը	
Եզրիպտոսի հասար տարկի. Դ. Ո.	60
» » վեցամս. «	35
Արտսհմամի » տարկի. ՅՂ.	20
» » վեցամս. »	12

Բաժանորդագիրը կանխիկ և թղթատարի ծախքը խմբագրութեան վրայ է:

Նամակ կամ որևէ զրուիթիւն պէտք է ուղղել տա:

Խմբագրութիւն «Արշալոյս» Լրագրի:  
 Շարա Մօհամմէտ Ալի (Հապալանիյէ)  
 Տպարան Մ. Դարբիսեանի  
 Հանեցէք, Տէր, ընդունիլ յարգանքներս  
 Տնօրէն խմբագիր  
 Արշալոյս Լրագրի  
 Ե. ԹՈՐՈՍԵԱՆ

### ԼՐԱՔԱՂ

**TIMES** կ'իմացնէ թէ քիւրտերը Բըշահաշէնի (Մասուն) վանքը կողոպտած և վանահայրն ու երկու վանականներն սպաննած են, նոյնպէս Սերոնք և ուրիշ 5 գիւղեր կողոպտած և հրդեհած են և շատ մը գիւղացիներ սպաննած: Վիւննայէն եկած հեռագիր մը շարուած հայերուն թիւը 800ի կը հասցնէ, որոնց մէջ կը զըտնուի նաև պատրիարքական Տեղապահը:

— Հայերը վերջերս մատուռ մը հիմնած են ի Միդղանո նախկին մայրաքաղաք Լէնկիթիճուրի, որ քահղել տուած է քաղմաթիւ եկեղեցիներ ի հայաստան:

Լ'ԱՐՄԵՆԻ

— Դարէժէն կ'իմացնեն թէ՛ Ատրպատականի մէջ հաստատուած 30000 Նեստորականներ ռուսադաւանութիւն ընդունած են ռուս միսիոնարաց ձեռքով: Թրքոպարսկական սահմանագլխի կողմէն ալ միևնոյն բռնութեան տեսիլը կը տեսնուի: Վանի նահանգին (Հայաստան) մէջ ռուս եկեղեցականները քաղմաթիւ են ու գործօն. կը քարոզեն հաւատք և սերմեր, երկագործական գործիներ և հագուստներ կը քաշեն գիւղացիներուն:

— Գ. Զէնոլիէվ, ռուսական դեսպանը, ամսոյս 1ին Սուլթանի խստիւ բողոքած է ռուսական սահմանագլխի կողմէն Հայաստանի մէջ քիւրտերուն գործած խժոժութեանց դէմ: ԳՈՒՐԻԷ ՏԷ ՊԱԼՔԱՆ

— Ակմից Կ. Պոլսի Պատրիարքարան է ուղարկուած մի կարգ եկեղեցական արծաթեղէն աւելորդ զարդեր, վաճառման համար: Արդիւնքը պիտի յատկացուի Ակնում մի որբանոց հիմնելու գործին:

— Արաւ կիրի տեղապահը նոյն տեղի օտար որբանոցների մասին ընդարձակ մի տեղեկագիր է ուղարկել Կ. Պոլսի Պատրիարքարան՝ մի կարգ կրօնական գրքեր խնդրելով: ՆՈՐ-ԴԱՐ

— Առանց թելի հեռագրէն յետոյ ահաւասիկ առանց թելի հեռախօսն (Telephone) ալ: Ասոր հնարողն ամերիկացի մ'է հայս կամ Հէյզս (Hayes) անունով, Նիւ Եորքի մէջ փորձեր կատարեց մեծ յաջողութեամբ: Լուսոյ ճառագայթ մը յարաբերութեան մէջ կը դնէ ամենահեռաւոր տեղերն: Մեր դարէն աւելի հրաշքներով լի դար մեղած է: A. SAISSY



Տիար Գառնիկ ճ. Թումայեան և ընտանիք կը խնդրեն իրենց ազգականներէ և բարեկամներէն ներկայ գտնուիլ Հանգստեան պաշտօնի պատարագին որ պիտի կատարուի ներկայ ամսոյս 4(1)/22 ին շաբաթ առաւօտ Ս. Աստուածածին եկեղեցոյ մէջ առձիւ իրենց վստահեօրի գտնոր և քրջ Օր. Հայկուհի ճ. Թումայեանի մահուան տարեդարձին:

Կը խնդրենք մեր արդոյ բաժանորդներին որ Հանին բաժանորդագրութեան պայմանները կրկին աչքէ անցնել:

Տպարարան մեքեայի խանգարման առթիւ այս թիւը ոչ կրեցաւ:

Le Gérant, J. M UNIER